

ԳԼՈՒԽ Է.

1 Յաղագս մահուան Արշակայ թագաւորին Յայոց, թէ զիս'րո՞ մեռաւ յերկրին խուժաստանի յԱնդմըշն բերդին ինք ինքեամբ ձեռաւք, եւ Դրաստամատն էր պատճառք մահուն:

2 Այլ յայնմ ժամանակի դեռ տակաւին եւս կայր կենդանի Արշակ արքայ Յայոց յերկրին իշխանութեանն թագաւորութեանն Պարսից ի կողմանս խուժաստանի յԱնդմըշն բերդին. այս ինքն որ անուն Անյուշն բերդն կոչեն: 3 Եւ զայնու ժամանակաւ խաղաղացաւ պատերազմ տալ Պարսից ընդ Յայս. զի Արշակունին թագաւորն Քուշանաց, որ նստեր ի Բաղխ քաղաքի, նա յարոյց տալ պատերազմ ընդ Սասանականին Շապիոյ թագաւորին Պարսից: 4 Եւ Շապուհ թագաւորն զամենայն զգաւրսն Պարսից զումարեալ խաղացոյց տալ պատերազմ ընդ նմա, եւ զորս միանգամ ածեալ էր գերութիւն յերկրէն Յայոց զամենայն այրեւծի զումարեալ՝ խաղացոյց ընդ ինքեան. եւ զներքինին անգամ թագաւորին Յայոց Արշակայ տաներ ընդ ինքեան ի գործ պատերազմին¹:

5 Եւ էր ներքինի մի Յայոց թագաւորին Արշակայ, ոստիկան հաւատարիմ լեալ, ներքինի սիրելի մեծի իշխանութեան եւ մեծի պատուի, եւ անուն Դրաստամատն: 6 Իսկ իբրեւ եղեւ պատերազմ ընդ թագաւորին Քուշանաց եւ ընդ թագաւորին Պարսից, չարաչար տարածեին զգաւրսն Պարսից զաւրքն Քուշանաց, եւ զբազումս կոտորեցին ի զաւրացն Պարսից զաւրքն Քուշանաց, եւ զբազումս ձերբակալ արարին, եւ զկես փախստականս հալածական առնեին: 7 Իսկ Դրաստամատն ներքինին, որ յամս Տիրանայ թագաւորին Յայոց եւ Արշակայ որդւոյ նորա թագաւորին Յայոց լեալ էր իշխան տան գաւառին եւ հաւատարիմ զանծուց Անգեղ բերդին, եւ ամենայն բերդացն արքունի՝ որ ի կողմանս յայնս. սոյնպէս եւ յերկրին Ծոփաց ի Բնաբեղ բերդին զանծքն լեալ էին ընդ նովաւ, եւ բարձ նորա ի վեր քան զամենայն նախարարացն: 8 Եւ քանզի այս գործակալութիւն եւ մարդպետութիւն, որում հայրն կոչեին ներքինեաց, գործ² լեալ էր ի բնէ ժամանակաց ի թագաւորութեանն Արշակունոյ, եւ զայս Դրաստամատն ներքինի զիշխանն զԱնգեղ տանն գերեալ տարեալ էր յերկիրն Պարսից ի ժամանակին՝ յորժամ կալան զԱրշակ արքայն Յայոց:

9 Եւ այս Դրաստամատ էր յայնմ ճակատու, յորում վատթարեցին Քուշանքն զՇապուհ արքայն Պարսից: 10 Եւ Դրաստամատ գործեաց անհնարին քաջութիւն այնչափ կռուաւ եւս ի վերայ Շապիոյ արքայի, եւ ապրեցոյց

1 Օրինակ մի այսպէս ունի. եւ զոր միանգամ ածեալ էր ի գերութիւն յերկրէն Յայոց Արշակայ՝ տաներ ընդ ինքեան ի գործ պատերազմին

2 Օրինակ մի՝ գործակալ